

**Levon Abrahamian.** Heavenly Temple Rising out of the Body of Sacrifice: The Vision of Grigor the Illuminator in Anthropological Perspective. In: *Armenian Saints and Sanctuaries: Genesis, Types, Cult.* Yerevan: “Hayastan”, 2001, p. 361-367 (in Armenian).

**Левон Абрамян.** Небесный храм, вырастающий из тела жертвы: видение Григория Просветителя с этнологической точки зрения // Армянские святые и святыни. Ереван: “Гитутюн”, 2001, с. 361-367 (на арм. яз.).

Հայոց սրբերն ու սրբավայրերը. Ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան. “Հայաստան”, 2001, էջ 361-367:

### *Լևոն Աբրահամյան*

#### **ԶՈՂԻ ՄԱՐՄԵՆԻՑ ԱԺՈՂ ԵՐԿՆԱՅԻՆ ՏԱԾԱՐԸ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՏԵՍԻԼՔԸ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ**

Էջմիածնի Մայր տաճարի սկիզբն ավանդաբար կապվում է Գրիգոր Լուսավորչի հայտնի տեսիլքի հետ, որն Ազաթանգեղոսը նկարագրում է հետևյալ խոսքերով. «Եւ ահավոր տեսիլ մարդոյ բարձր և ահեղ, որ ... ի ձեռինն իրում ուն մի մեծ ոսկի...: Եւ ինքն սլացեալ խոյացեալ գայր՝ ըստ մմանութեան արագաթև արծուոյ. և եկն էջ եհաս մինչև մօտ ի յատակս երկրիս, ի շինամէջ քաղաքին, և բաղխեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյն, և մեծ և անչափ դրնդիւնքն հնչեցին ի սանդարամետս անդնդոց. և ամենայն երկիր լերեւելիս, յական տեսանելեաց բաւելոյ, հարթ հաւասար դաշտաձև յատակեցաւ:

Եւ տեսանէի ի մէջ քաղաքիս, մօտ յապարանսն արքունի, խարսխաձև ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչև յոյժ, և ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա»:

Երեք մմանատիպ խարիսխներ, որոնցից լուսեղէն խաչերով պսակված սյուներ են բարձրանում, համապատասխանաբար առաջանում են այն երեք տեղերում, ուր նահատակվել էին հոիփսեմեան կույսերը: Սակայն այդ երեք սյուներն առաջինից ցածր էին, նրանց խարիսխները կարմիր էին՝ արյան գույնով, սյուներն ամպեղէն էին և խոյակները՝ հրեղէն: Այս չորս սյուների խաչերի վրա կամարներ են կապվում, և վրան գոյանում է գմբեթաձև ամպեղէն շինվածքը<sup>1</sup>:

Եթե երկնային այրը կռանով գետնին է հարվածում, այն էլ այնքան ուժգին, որ դաշտաձև տափակացնում է ամբողջ երևացող երկիրը, ապա հարց է առաջանում. ինչի՞նչ կամ ու՞մ էր ուղղված այդ հարվածը: Համապատասխանաբար, գործ ունենք տեսիլքի պատմական կամ առասպելաբանական վերականգնման խնդրի հետ: Պատմական կտրվածքն ի հայտ է գալիս բնականաբար,

<sup>1</sup> Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, 735-737:

արդեն այն պատճառով, որ տեսիլքն առնչվում է իրական կառույցի և վայրի հետ: Չնայած, Ագաթանգեղոսը նշում է վայրը՝ քաղաքի մեջտեղը, սակայն այն կարծես սեմանտիկորեն դատարկ է՝ ահավոր ու շքեղ այրը հարվածում է միայն լայնատարած գեոմի: Այսինքն, թեև տեսիլքի սկիզբը խիստ ավերիչ երանգավորում ունի, այն, փաստորեն, որևէ ակնարկ չի պարունակում, որ եզրակացնենք, թե Լուսավորիչն ինչ-որ հեթանոսական տաճար է ավերում այն վայրում, որտեղ հետագայում կառուցվում է Մայր տաճարը: Դրանով էջմիածնի Մայր տաճարի ծագումնաբանությունը, կարծես, զրկվում է նախադեպի կարգավիճակից, քանի որ Ագաթանգեղոսը երբեմն ամենայն մանրամասնությամբ պատմում է, թե ինչպես Լուսավորիչը, նորահավատ թագավորի աջակցությամբ՝ Հայաստանով մեկ ավերում է հեթանոսական մեհյաններն ու պաշտամունքի առարկաները, դրանց տեղը խաչի նշանը կանգնեցնելով (Ագաթ. 777-790): Ուշագրավ է, որ վերջին գործողությունն ունի իր նախադեպը. Լուսավորիչը Վաղարշապատում պարսպապատում է այն տեղը, ուր իրեն ցույց էր տրվել հրեղեն սյունը՝ ոսկե խարսխի վրա, և այնտեղ կանգնեցնում փրկչական խաչի նշանը (Ագաթ. 770): Տերունական խաչի գործությամբ, հիմնովին կործանելով Տարոնի երկրի վերջին երեք բազիլիկները, Լուսավորիչը մեհյանների վայրում եկեղեցու հիմքեր է դնում, և այստեղից էլ սկսվում է եկեղեցիներ կառուցելու գործընթացը (Ագաթ. 809, 813-814): Այսօրվա հետազոտությունները գալիս են հաստատելու Ագաթանգեղոսի այս վկայությունը. քրիստոնեական անդրանիկ եկեղեցիները իրոք կառուցվում էին հեթանոսական սրբավայրերում կամ ուղղակի հեթանոսական տաճարների հիմքերի վրա<sup>2</sup>:

Վերադառնալով Վաղարշապատ, Լուսավորիչը կանգնեցնում է Քրիստոսի եկեղեցին՝ իր կողմից նախապես կնքած վայրում: Նույնը կատարում է ամենուրեք, մեհյանների տեղերում, որոնք նախապես կործանել էր և կնքել խաչի նշանով (Ագաթ. 841): Այսինքն, Ագաթանգեղոսը ներկայացնում է նոր հավատի ներմուծման եռափուլ մոդելը. ա) հին հավատի պաշտամունքային կառույցների և/կամ խորհրդանիշների ավերում, բ) դրանց տեղը փրկչական խաչի նշանի կանգնեցում, գ) կնքած տեղում եկեղեցիների կառուցում: Այս մոդելն արտացոլում է այն պատմական իրողությունը, որ Գրիգոր Լուսավորիչն իրավունք է ստանում եկեղեցիներ կառուցել Կեսարիայում՝ հոգևոր աստիճան ստանալուց հետո<sup>3</sup>, մինչ այդ նա միայն վկայարաններ էր կառուցում և խաչի նշաններ կանգնեցնում: Կարելի է բ և գ կետերը միացնել, քանի որ և՛ խաչը (որն, ամենայն հավանականությամբ սյան վրա էր տեղադրվում<sup>4</sup>), և՛ եկեղեցին, իրենց կառուցվածքային և «ծա

<sup>2</sup> Տե՛ս՝ *Ա.Ա.Սահիճյան*, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Եր., 1955, էջ 232 *նույնի*, էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը, - «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 3, էջ 82; *Թ.Թորամանյան*, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Հատ. Ա, Եր., 1942, էջ 209 և հտ.:

<sup>3</sup> Տե՛ս՝ *С.Х.Мнацаканян*. Крестовокупольные композиции Армении и Византии V - VII веков. Ер., 1989, с. 44, 46.

<sup>4</sup> *С.Х.Мнацаканян*, Նշվ. աշխ., էջ 44-45: Այդ արխայիկ կառուցվածքը, ինչպես ցույց է տալիս հնագիտական և արվեստագիտական նյութը, քրիստոնեությունը շատ ավելի հին ավանդույթներից էր որդեգրել՝ սյունը պակտոլ խորհրդանիշը կամ արձանը խաչով փոխարինելով (այդ կառույցի տարբեր կտրվածքների մասին, տե՛ս *Л.Абрамян*. Христос

գումնաբանական» առումներով նույնանում են՝ գոնե մեզ հետաքրքրող տեսակ-  
կյունից: Հիշենք մաս, որ տեսիլքում գլխավոր՝ հրեղեն սյունը, մեկնաբանվում է  
որպես կաթողիկե եկեղեցի (Ագաթ. 744): Սակայն վերը բերված եռափուլ մոդելն  
ավելի տեսանելի է դարձնում այն առասպելույթը, կամ, ավելի ճիշտ, ծիսիկան  
պարադիգմը, որը դիտարկելու ենք ստորև: Բացի այդ, այն համապատասխա-  
նում է տեսիլքի երկնային տաճարի ծավալման սյուն - եկեղեցի տրամաբանու-  
թյանը և Մայր տաճարի կառուցման հնարավոր տրամաբանությանը՝ խաչակիր  
սյուն - քառասյուն ամպիովանի - ամպիովանի ամփոփող կառույց<sup>5</sup>:

Ուշագրավ է, որ տեսիլքում արտացոլված նախադեպը զուրկ է հենց ա-  
ռաջին՝ ամենակարևոր և նշանակալից մասից, չնայած այն որոշ չափով ներկա է  
երկնային այրի ավերիչ գործողության համատեքստում: Այս հանգամանքը բա-  
վականին տարօրինակ է, առանձնապես եթե հաշվի առնենք, որ, ինչպես արդեն  
նշել ենք, Ագաթանգեղոսն այլ դեպքերում, հեթանոսական բազիլիկների կործան-  
ման մանրամասներն է նկարագրում: Հեղինակի «բացը» լրացնելու գալիս են  
հնագետները, որոնք Մայր տաճարի հիմքում հեթանոսական պաշտամունքային  
շինության հետքեր են տեսնում: Այսպես օրինակ, Գ.Տիրացյանը ենթադրում է,  
որ Մայր տաճարի տեղում նախկինում հեթանոսական տաճար է կանգնած եղել,  
հավանաբար՝ Անահիտ-Արտեմիդեյին նվիրված, որը հիմնովին ավերվեց դարձի  
տարիներին<sup>6</sup>: Ստ.Մնացականյանը ենթադրում է, որ այդ տաճարը նվիրված էր  
Սանդարամետին<sup>7</sup>, ըստ երևույթին, բառացիորեն ընկալելով Ագաթանգեղոսի  
խոսքերը. «և մեծ և անչափ դրնդիք հնչեցին ի սանդարամետու անդնդոց»(Ագաթ.  
735): 1950-կան թթ. վերականգնման աշխատանքների հետևանքով, տաճարի  
ավագ խորանում՝ հնագույն արսիդի կենտրոնում, հայտնաբերած թոնրած կը-  
րակարանը կարծես ավելի շոշափելի դարձրեց Մայր տաճարի տեղում նախկին-  
ում հեթանոսական մեհյանի գտնվելու վարկածը: Այդպես է, օրինակ, այսօր  
ներկայացվում կրակարանն տաճարում տեղադրված թանգարանի այցելուներ-  
ին (մուտքը, դեպի բեմի տակ պահպանված կրակարանը, բացված է թանգարա-  
նի կողմից, որն արդեն իսկ այն հատուկ պատմություն պահանջող թանգարանա-  
յին առարկա է դարձնում): Չի բացառվում, որ կրակարանը տաճարի ստեղծման  
մասին դեռ մոր առասպելների հիմք կծառայի: Հմմտ. ագաթանգեղոսյան նկա-  
րագրության հետևյալ մոր բանահյուսական տարբերակը, որտեղ վերացական  
«սանդարամետու անդնդոց»-ը շոշափելի գետնափոր մեհյան է դառնում. «Միա-  
ծինը (այսինքն Քրիստոսը) ոսկե մուրճը ձեռքին իջնում է երկնքից և խփում է

как змеборец: церковная традиция и память художника. - Мифологические представления в народном творчестве. М., 1993, с.165-179; *Դեսիրիխանյան, Լ. Աբրահամյան*, Խաչքարը որպես եռամաս հայելակերպ սիմետրիկ հորինվածքների տարբերակ, - Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, Ջեկուցումների թեզեր, Եր., 1995, էջ 18-19):

<sup>5</sup> Տե՛ս *Ս.Մ.Մնացականյան*, Նշվ. աշխ., էջ 45.

<sup>6</sup> *Գ.Ա.Տիրացյան*. Культура древней Армении, VI в. до н.э. - III в. н.э. (по археологическим данным). Ер., 1988, с. 154.

<sup>7</sup> *Ս.Մ.Մնացականյան*. Նշվ. աշխ., էջ 43.

այնտեղ, որտեղ գտնվում էր Սանդարամետի գետնափոր մեհյանը»<sup>8</sup>: Չի բացառվում նաև, որ իրական մեհյանն այստեղ ի հայտ է գալիս, որպեսզի լրացվի տրամաբանական բացթողումը՝ սեմանտիկորեն լցվի դատարկ ա կետը: Մասնագետները, սակայն, հակված են բացված կրակարանը ավելի ուշ ժամանակներին վերագրելու՝ երբ Մայր տաճարն արդեն կառուցված էր<sup>9</sup>, այսինքն, այն տեսիլքի համատեքստում չեն տեղադրում<sup>10</sup>:

Մայր տաճարի պարագայում՝ եռափուլ մոդելում, առաջին կետի (փուլի) բացակայությունը հնարավոր է բացատրել, եթե ընդունենք Մ.Աբեղյանի կարծիքը, որ Լուսավորչի տեսիլքի դրվագը VII դարի, կամ նույնիսկ ավելի ուշ ժամանակի խմբագրական գերդիր է<sup>11</sup>: Սակայն, այս դեպքում ևս առասպելը թույլ է տալիս ուրվագծել համապարփակ մի սխեմա, որը բնորոշ է շինարարական բընույթի արխայիկ ծիսաստուսապելաբանական համակարգերին: Դեռ ավելին, ա կետի բացակայությունն, ավելի ճիշտ՝ իմպլիցիտ ներկայությունը հնարավորություն է տալիս «շինարարական» առասպելի այնպիսի կողմերը տեսնել, որոնք ետին պլան են մղվում, երբ ա կետը ավերման հզոր խորհրդանիշներով ու մանրամասնություններով է հագեցած: Այսպես, տեսիլքը շեշտում է քաղաքի տեղագրական կ ե ն տ ո ռ ո ն ն անկախ այն բանից, թե ինչ է գտնվում այնտեղ: Հաշվի առնելով, որ նախադեպը տեղի է ունենում մայրաքաղաքում՝ երկրի խորհրդանիշում ու կենտրոնում, այն նշանակալի է ամբողջ երկրի և, փաստորեն, ամբողջ աշխարհի համար: Եթե մատնացուցվեր որևէ հեթանոսական տաճար, թեկուզև ամենակարևորը, ապա դրա ավերումը կմնար միայն մասնավոր սխրագործություն: Ի տարբերություն՝ կործանիչ հարվածը հասցեագրված է ընդհանրական ստորգետնյա Սանդարամետին՝ դժողքին, և որպես հետևանք, աշխարհի կենտրոնից բարձրանում է պունը՝ տիեզերական առանցքի (axis mundi) համատարած կերպարը: Ա մ պ ե խոյակը՝ ի լրացումն, տեղագրորեն շեշտում է սյան տիեզերական բնու

<sup>8</sup> Կ.Ավետիսյան, Աշխարհագրական անունների բացատրական բառարան, Եր., 1969, էջ 135-136:

<sup>9</sup> Գ.Տիրացյանը այն IV դ. կրոնափոխ նախարարների գործունեության արդյունք է համարում (Գ.Ա. Կարապետյան, Նշվ. աշխ., էջ 154), Ա.Սահիճյանն այն վերագրում է Հայաստանում IV-V դդ. զրադաշտական կրոնը պարսիկների կողմից արմատավորելու ջանքերին (Ա.Ս.Սահիճյան, Նշվ. աշխ., էջ 75; հմմտ. Վ.Մ.Հարությունյան, Էջմիածին, Եր., 1985, էջ 11), սակայն, չի բացառում, որ կրակարանը ավելի վաղ ժամանակներում՝ մինչև եկեղեցու կառուցումը, գոյություն ունեցած լիներ, իսկ Ստ.Մնացականյանն այն տեղափոխում է VI դար, երբ Պարսկաստանը նորից Հայաստանում սկսեց զրադաշտության բռնի ներդրումը (Ս.Մ.Մնացականյան, Նշվ. աշխ., էջ 42):

<sup>10</sup> Հարկ է նշել, որ կրակարանի խնդրում կան և ուրիշ հարցեր ու անորոշություններ՝ հիշենք, որ այն բացվել է տաճարի վերականգնման աշխատանքների ժամանակ և հատուկ չի պեղվել: Ոմանք նույնիսկ կասկածում են, որ բացված գետնափոր կառույցը կրակարան-մեհյան է եղել: Առանձին հետաքրքիր թեմա է կրակարանի պահպանվածության հարցը. ինչու՞ այն չի ավերվել տաճարի վերակառուցումների ժամանակ (տե՛ս Ա.Ս.Սահիճյան, Նշվ. աշխ., էջ 75) կամ ի՞նչ է նշանակում «ավերել» տեխնիկական և գաղափարախոսական առումով հայոց դարձի համատեքստում: Հեղինակն օգտվում է առիթից, իր երախտագիտությունն արտահայտելու Հ.Պետրոսյանին և Հ.Հակոբյանին՝ այսև հողվածում դիտարկվող այլ խնդիրների շուրջ օգտաշատ քննարկման առնչությամբ:

<sup>11</sup> Մ.Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 183-187: Ըստ Ստ. Մնացականյանի (Նշվ.աշխ. էջ 44), այդ վարկածը պարզ է դարձնում, որ տեսիլքում արտացոլվում են արդեն կանգուն վաղ քրիստոնեական քառասյուն ամպիոկանի կառույցները, այլ ոչ՝ դրանց վերականգնական նախատիպը:

յթը: Տեսիլքում գլխավոր սյան քրիստոնեական մեկնաբանումը տիեզերական առանցքի մեկ այլ արտահայտություն է. «և սիւնն հրեղէն՝ կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ թևոց իւրոց» (Ագաթ. 744):

Ինչպէս արդէն նկատել ենք, հնագիտությունը գալիս է լրացնելու առասպելի «բացթողումները». քաղաքի տեղագրական կենտրոնն իրականում դատարկ չէ, այնտեղ, ամենայն հավանականությամբ, գտնվում էր հեթանոսական տաճարը: Կենտրոնի գաղափարն ավելի է շեշտվում Վաղարշապատի կիրո հատակագծով<sup>12</sup>: Հենց այդ կենտրոնին էլ հարվածում է տեսիլքի երկնային այրը: Այսինքն, որոշ չափազանցությամբ կարելի է ասել, որ հողվածի սկզբում դրած հարցին՝ ինչի՞նչ էր ուղղված երկնային հարվածը, հնագիտությունը պատասխանում է՝ հեթանոսական տաճարին:

Նույն հարցի երկրորդ մասին՝ ու՞մ էր ուղղված այդ հարվածը, պատասխան կարող է տալ ինքը՝ տեսիլքը: Ըստ էության, այն անուղղակիորեն հենց այդ մասին է խոսում: Արդէն այն, որ տեսիլքը չի պատասխանում «ինչի՞նչ» հարցին, օգնում է «ու՞մ» հարցի պատասխանը որոնելուն: Ծիսատաապելաբանական համակարգում, ընդհանրապես, պարտադիր չէ ծիսական գործողության և այդ գործողության հասցեատիրոջ տարածական համապատասխանությունը: Հիշենք թե կուզ դարբինների պարբերաբար կռամահարումն իրենց դարբնոցներում՝ Մասիսի գագաթին գամված Արտավազդի շրթաներն ամրացնելու նպատակով: Նույն մոգական տրամաբանությամբ, տեսիլքում, ի պատասխան «պարապ» հարվածի՝ «մեծ և անչափ դրնդիւնքն հնչեցին ի սանդարամետս անդնդոց»: Այսինքն, հարվածն իր հասցեատերն ունի՝ դա դժոխքի տերն է: Ավելի լայն առասպելաբանական համատեքստում՝ երկնային այրը համապատասխանում է ամպրոպային աստծուն, որի մշտական հակառակորդը քտոնիկ վիշապն է: Պատահական չէ, որ երկնային այրը, որը տեսիլքում մեկնաբանվում է իբրև «տեսչությունն Աստուծոյ» (Ագաթ. 743), ժողովրդական տարբերակներում վերածվում է «Բրիստոսի»<sup>13</sup>, որի գենքը՝ ոսկե կռանը, հարաբերակցվում է ամպրոպային աստծո գենքի՝ կալծակի հետ<sup>14</sup> և որն ինքը հաճախ պատկերացվում է իբրև վիշապամարտիկ՝ օրինակ, մանրանկարներում<sup>15</sup>:

Այն, որ տեսիլքում արտացոլված է վիշապամարտության թեման, հուշում է նաև հարվածի տեղում հրաշալի սյան բարձրանալու հանգամանքը<sup>16</sup>: Նման

<sup>12</sup> Տե՛ս *Г.А. Тирациян*. К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валааршапата. - «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 2, էջ 89-90; *Его же*. Культура древней Армении, с.155; *Г.Кочеленко, А.Акопян*. Градостроительство Армении и Парфуса. - Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, Ջեկուցումների ժողովածու, հ.1, Եր., 1978, էջ 255-256:

<sup>13</sup> *Կ.Ավետիսյան*, Նշվ. աշխ., էջ 135-136; հմմտ. *Ա.Ղանալանյան*, Ավանդապատում, Եր. 1969, 602 ա և բ:

<sup>14</sup> Հմմտ. *Հ.Պետրոսյան*, Լուսը և ոսկին Գրիգոր Լուսավորչի տեսիլքում, - Հին Հայաստանի ոսկին, Ջեկուցումների թեզիսներ, Եր., 1997, էջ 26-28, որտեղ Լուսավորչի տեսիլքում հանդես եկող ոսկին դիտարկվում է որպես «աստված-լույս-ոսկի» խորհրդանիշային եղանակի արտահայտություն:

<sup>15</sup> Տե՛ս *А.Абрамян*. Նշվ. աշխ.

<sup>16</sup> Նշենք, որ տեսիլքում ուղղակիորեն չեն նույնացվում հարվածի և սյան լոկուսները:

սյուժեն՝ վիշապամարտի հետևանքով սպանված վիշապի մարմնից աճում է տիեզերական ծառը, ինչպես փորձել ենք ցույց տալ մեկ այլ առիթով, առաջին երկվորյակների առասպելության օձալին (վիշապալին) կողի հիմնական մասն է<sup>17</sup>: Երկվորյակների առասպելությունը՝ իր բոլոր կողերով, հիմք է ծառայում ման շինարարական զոհի համատարած ծիսաստասպելաբանական հասկացությանը. շինարարական զոհից որևէ կառույց է ծավալվում (տաճար, ամրոց, տուն, սյուն, խաչքար, ևն), ինչպես առաջին զոհից՝ տիեզերքը<sup>18</sup>: Քանի որ առաջին երկվորյակների առասպելությունը մենամարտ է ենթադրում, որն ողղակիորեն չի արտահայտված զոհաբերող-զոհ (նույն թվում՝ շինարարական զոհ) զուգի պարագայում, ապա շինարարական զոհի ծիսաստասպելաբանական սխեմայի շրջանակները համապատասխանաբար ընդարձակվում են, ներգրավելով ման սյուժեներ, որոնք սովորաբար չէին դասվի այդպիսիների շարքում: Օրինակ, եթե հոփսիսմենտական զոհերը գոնե ձևականորեն կարող են ընկալվել իբրև շինարարական՝ քանի որ սյուներն ու դրանց հիման վրա ծավալված երկնային տաճարը, փաստորեն, զոհերի մահատակման տեղից, այսինքն, մրանց ոսկորներից են բարձրանում, ապա գլխավոր սյան բարձրանալը միայն շինարարական առասպելության վերը նշված ընդլայնված սխեմայի շրջանակներում է ընդգրկվում:

Նույնը կարելի է ասել մեկ ուրիշ առասպելի մասին, որը նույնպես Էջմիածնի տաճարի սկզբի մասին է պատմում. «Առաջ ժամանակ, երբ որ Էջմիածնու վանքը ըսկըսըմ ին շինել, գիշեր անցնըմ ա վըրին, առավոտ վարպետներ գալիս ին Գրիգոր Լուսավորչի հետ, տեսնում ին, որ հիմքը քանդվել ա: Երազըմ Լուսավորիչ տենըմ ա, որ Հիսուս իրա հետ խոսըմ ա, ասըմ ա. Ըտեղ չարի յըղնաղ ա (խումբ, հոտ), ես ըդրանց ցիր ու ցան կանեմ: Մեկ էլ տենըմ ա, որ Հիսուս ձեռին մե ոսկե ուռ կա: Գալիս ա Էջմիածնու վանքի հիմքի մոտ, ուռովը ըսկըսըմ ա խըփիլ: Երբ որ խըփըմ ա, չարի յըղնաղը ցիր ու ցան ա ըլըմ: Ըտրանից ետո վանքը շինըմ ին, մատակին հասնըմ:»<sup>19</sup> Կառուցվածքային առումով, Լուսավորչի այս երազը մոտ է քննարկվող տեսիլքին. Հիսուսը ուկե ուռով (ոսկե կոանով)<sup>20</sup> խփում է չար ուժերին (Սանդարամետի տիրոջը, վիշապին), որի հետևանքով բարձրանում է տաճարը (հրեղեն սյունը)<sup>21</sup>: Վերջին սյուժեի համադրումն ազաթանգեղոսյան նկարագրության, և շինարարական զոհի առասպելության հետ երկուսի

---

Դրանք նույնանում են, երբ համադրում ենք Ազաթանգեղոսի տեղեկությունը հարվածի տեղի («ի շինամէջ քաղաքին»), սյան բարձրանալու («ի մեջ քաղաքիս, մօտ յապարանսն արքունի») մասին և քաղաքի կառուցվածքի հնագիտական վերականգնումները (պալա տատաճարային համալիր քաղաքի կենտրոնում):

<sup>17</sup> Տե՛ս *Ա.Ա.Աբրամյան, Ա.Ր.Դեմիրխանյան*. Мифологема близнецов и мировое дерево. - «Պատմա-բանասիրական հանդես», 1985, N 4, էջ 66-84; *Ա.Աբրամյան*. Христос как змееборец (առասպելության վիշապալին կողի վերաբերյալ):

<sup>18</sup> Տե՛ս *Ա.Ա.Աբրամյան, Ա.Ր.Դեմիրխանյան*. □ Նշվ. աշխ., էջ 82; □ *Ա.Կ.Բալբուրին*. Жилище в обрядах и представлениях восточных славян. Л., 1983, с. 60-61 и др.

<sup>19</sup> *Ա. Ղանայանյան*, Նշվ. աշխ., 602 բ:

<sup>20</sup> Հավանաբար, այստեղ *ոռն* (կոան) ձևափոխվել է *ոռի*-ի: Արդեն իսկ այս հանգամանքը կարող է հուշել, որ դիտարկվող տարբերակն ուղղակի կապ ունի Ազաթանգեղոսի նկարագրած տեսիլքի հետ:

<sup>21</sup> Համադրումն անհրարին կլինեն, եթե օգտվեինք նույն առասպելի ոտներեն թարգմանությունից (*Ա.Տ.Գանալանյան*. Армянские предания. Ер., 1979, 585а), քանի որ Հիսուսի ուռն այստեղ ոսկուց չէ և ոչ թե ինքն է քշում չար ուժերին երազում, այլ Լուսավորիչը՝

առնչությունը, թույլ են տալիս նորովի տեսնել և այն հայտնի դեպքերը, որոնք շինարարական զոհի մասին դասական պոեմներ են համարվում:

Այսպես, կամուրջների հիմքում՝ պատի շարվածքի մեջ, զոհ թաղելու մասին պատմությունները տիպաբանորեն առնչվում են սյան բարձրանալու պոեմին: Այդ պատմությունները կամուրջների հենց սյունատիպ հիմքին են վերաբերվում, ընդ որում, մեկ զոհը բավական է նույնիսկ բազմակամար (բազմահիմք) կամուրջների համար. օրինակ, Հնգակամար կամուրջի պատմության դեպքում<sup>22</sup>: Հիշենք, որ տեսիլքում մեկ հարվածը բավական է, որ երկնային տաճարի մյուս երեք սյուներն էլ բարձրանան: Ծիշտ է, այդ երեք սյուները նույնպես «աճում են» զոհերից, սակայն այս առասպելության իրադարձությունը տեղի է ունենում *post factum*, զոհաբերությունից շատ ուշ<sup>23</sup>, պատկանելով նույն ծննդոց համակարգին՝ երեք սյուները մեխանիկորեն կրկնում են առանցքային նախադեպը: Կամուրջների պարագայում, կարելի է ասել, որ անկախ ռեալ կառուցվածքային առանձնահատկություններից, կամուրջը պատկերացվում է իբրև մի հիմք (սյուն), որի վրա հանգում է ողջ կամուրջային կառույցը<sup>24</sup>, այսինքն, ըստ քննարկվող առասպելության լեզվի, կամուրջը «բարձրանում է» վտանգավոր ավերիչ ջրերից այն տեղում, ուր զոհաբերությունն է կատարվում: Կամուրջների դեպքում, շինարարական զոհը բնականորեն կարող է զուգորդվել ջուրը հովանավորող ոգիներին ուղղված գուրջ հացող զոհի հետ, ինչը մթագնեցնում է առասպելության բուն իմաստը: Օրինակ, Կոթերի կամուրջի պատմությունում, ջրերի «փիրն է» խորհուրդ տալիս մարդկային զոհաբերություն անել՝ կամուրջի հիմքը ալիքներից չկործանվելու համար<sup>25</sup>: Ծիանարարական զոհի առասպելության քննարկվող տեսանկյունից՝ հաղթահարվում, պատժվում է զոհի նախատիպը՝ հերոսի վիշապային հակառակորդը: Այստեղ, ամենայն հավանականությամբ, գործ ունենք առասպելության ձևափոխությունների հետ: Նախնական մոդելը՝ պարտված վիշապի մարմնից աճում է տիեզերական ծառի որևէ այլաձևություն, փոխվում է մեկ այլ մոդելի. տիեզերական ծառի որևէ այլաձևության աճը խոչընդոտվում է չար ուժերից, աճը տեղի է ունենում՝ արգելման պատճառը վերացնելիս: Վերը քննարկված Էջմիածնի տաճարի սկզբի մասին բանահյուսական տարբերակը նման ձևափոխման պատկերավոր օրինակներից է:

Առասպելության ձևափոխությունների շարքին է պատկանում և վիշապային հակառակորդի կերպարանափոխումը շինարարական զոհի: Ամենատարօրինակ ձևափոխումն այստեղ կարող է թվալ սատանայական հակառակորդի

---

արթմնի, այն էլ հասարակ ուռով: Այս դեպքը լավագույնս ցուցադրում է, ինչպես սխալ թարգմանության հետևանքով կարող են ստեղծվել բանահյուսական տեքստի նոր (տվյալ դեպքում՝ այլասերված) տարբերակներ:

<sup>22</sup> Տե՛ս *Ս. Ղանայանյան*, Նշվ. աշխ., 593:

<sup>23</sup> Հմմտ. նույն տեղում, 594՝ զոհաբերությունը կատարում են կամուրջը կառուցելուց հետո: Հմմտ. նաև զոհերի մատուցման թաղումն ա ղ Է ն կառուցված վկայարանների սեմանտիկ կենտրոնում՝ զոհասեղանների տեղում (Ագաթ. 769):

<sup>24</sup> Խոսքը, բնականաբար, հիմք ունեցող կամուրջների մասին է: Հմմտ. հայ ավանդական գլխատան «մայր» սյան հետ, որը հաճախ տան միակ սյան սիմվոլիկ ծանրաբեռնություն է կրում - տե՛ս *H. Marutyan. Home As the World.* - In: *L. Abrahamian, N. Sweezy (eds.), Armenian Folk Arts, Culture, and Identity.* Indianapolis and Bloomington, 2001:

<sup>25</sup> *Ս. Ղանայանյան*, Նշվ. աշխ., 592:

(հիշենք Սանդարամետ-դժոխքը՝ Լուսավորչի տեսիլքում) կերպարանափոխումը՝ «ն մ ե ղ շինարարական զոհի: Օրինակ, Ա.Ղանալանյանի կամրջային շինարարական զոհերի հավաքածուում»<sup>26</sup>, բոլոր հինգ զոհերն էլ անմեղ են, ընդ որում, դը-

րանցից միայն մեկն է տղա (N 594), չնայած մեկ ուրիշ դեպքում էլ, զոհի տղա լինելը տեսականորեն չի բացառվում (N 592), երկու տարբերակում՝ զոհերը վարպետների կանայք են (N 593, 598), մեկ այլ դեպքում էլ չի բացառվում, որ զոհը կենդանական լինի (N 598): Այս բազմազանության մեջ, այնուամենայնիվ նշմարվում է մի կարևոր օրինաչափություն: Եթե բացառենք այն դեպքերը, որոնք զոհի ընտրությունը բախտորոշ պատահականությանն են վերագրում (N593, 594, 598) այսինքն բախտագուշակության հայտնի ձևին, որն իր հերթին մեծացնում է զոհերի տեսականին, ապա շինարարական զոհի տիպիկ պատկերը կատանանք. այն աղջիկ է, ընդ որում՝ կույս (N 585, 592): Աշտարակի հին կամրջի պատմությունը (N 585) բացառում է նաև շինարարական զոհի բացառիկ արժեքը՝ վարպետների կամ հարազատների համար, ինչպիսի հատկություն ունեն բոլոր մյուս տարբերակները<sup>27</sup>: Այստեղ շինարարական զոհը մի որբ աղջիկ է:

Շինարարական զոհի նման բնույթը մեզ վերադարձնում է Լուսավորչի տեսիլքի երեք այլուերին, որոնք բարձրանում են կ ու յ ս եր ի նահատակման տեղերում: Տեսիլքը, որը, ինչպես արդեն նշել ենք, կարելի է դիտարկել որպես առաջին երկվորյակների առասպելային վիշապային կողի արտացոլում, երևան է հանում, թվում է, պարադոքսալ մի հանգամանք: Սուրբ կույսերը դժվար են համարվում վիշապային հակառակորդի կերպարին, որը պարտադրվում է տեսիլքի կառուցվածքի տրամաբանությամբ: Սակայն, արդեն այն, որ կույսերը հայտնվում են վիշապի հետ նույն սեմանտիկ դաշտում, վկայում է, որ նրանց նախակերպարում պետք է լինեն, թեկուզև խիստ անուղղակիորեն արտահայտված, ինչ-որ վիշապային հատկություններ: Չնայած թվացյալ անհավանականությանը, կառուցվածքային-տիպաբանական վերլուծությունը, որն արել ենք մեկ այլ առիթով, ցույց է տալիս, որ կանացի արխայիկ կերպարները հաճախ ակնհայտ վիշապային հատկանիշներ են բացահայտում<sup>28</sup>: Եվ վերջապես, մի հանգամանք ևս թույլ է տալիս ենթադրել, որ անմեղ զոհի և վիշապային հակառակորդի նույն սեմանտիկ դաշտում հայտնվելն իր մոռացված պատճառներն ունի. զոհի հատկություններով օժտված արխայիկ կերպարներն երբեմն իրենց աղոտ կապն են հայտնաբերում որևէ անորոշ մեղքի հետ: Հիշենք թեկուզ, ինչպես Հիսուս Քրիստոսը, ամենաանմեղ զոհը, իր վրա վերցրեց առաջին զուգի և նրանից սերված

<sup>26</sup> Նույն տեղում, 585, 592, 593, 594, 598:

<sup>27</sup> Չի բացառվում, որ շինարարական զոհի այս հատկությունը փոխառնված է հրեական-քրիստոնեական զոհի մասին ավանդական պատկերացումներից:

<sup>28</sup> Տե՛ս *Ա.Ա.Աբրամյան*. Змеи у источника (к символике универсального ритуально-мифологического образа). - Историко-этнографические исследования по фольклору. М., 1994, с.25-26, 28-29. Այս սիմվոլիկ կապի հաստատման գործում կարևոր դեր է խաղում արյունը, առանձնապես պարբերական արնահոսությունը՝ որպես բնությունից ժառանգված հատկություն - Հմմտ. *C.Knight*. Blood Relations: Menstruation and the Origins of Culture. New Haven and London, 1991, p.21-50:



ողջ մարդկության մեղքը: Մեղքի հետ անորոշ աղերսներ նշմարվում են նաև Թրիտաչի տիպի կերպարների մոտ, որոնք հայտնվում են ջրհորում<sup>29</sup> կամ խոր վիրապում՝ Գրիգոր Լուսավորչի մամ: Սակայն, վերջին սյուժեն առանձին քննարկման թեմա է: Այստեղ նշենք միայն, որ դուրս գալով խոր վիրապից, Լուսավորիչ ըտեսնում է իր զարմանալի տեսիլքը, որը, ինչպես փորձեցինք ցույց տալ, ոչ միայն Էջմիածնի տաճարի հիմնադրման պատմությունն է արտացոլում, այլև, ծիսաառասպելաբանական հագեցված մի կառուցվածք, որը հնարավորություն է տալիս բացահայտել շատ ավելի հնամենի իրողություններ ու սիմվոլիկ կառույցներ:

---

<sup>29</sup> Տե՛ս *В.Н.Топоров*. Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции. - «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 3, էջ.94, ծնթ.31: